ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016 թվականի N 111 - Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի գ) ենթակետով, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային օգտագործման ընթացիկ վիճակն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Դավթյան Սուսաննա - աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

Ասրյան Աշոտ – աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Կոստանդյան Մուշեղ– աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչության պետ,

2. Ուսումնասիրություններին մեթոդական օժանդակություն ցուցաբերելու նպատակով ներգրավել <<ՎԻՎԱՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> սահմանափակ պատասխանավության ընկերության մասնագետներին:

3. Աշխատակազմի ղեկավարին՝ մատուցած ծառայությունների համար վճարումն իրականացնելու համար <<ՎԻՎԱՏ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ հետ կնքել պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. նոյեմբերի 10
ք. Կապան